**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/3 ծածկագրով Հրազդան մարզադաշտի տեխնիկական վիճակի ստուգման ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

11.02.2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց
Անդամներ՝ Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Ա. Քոչարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Հյուսիսյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի ուսումնասիրության մասին**

---

(Մ. Աղայանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ առողջապահության, ՀՀ ԿԳՄՍ նախարարություններից, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացվել են պատասխան գրությունները:

1.2 Գնման ընթացակարգի մասնակից՝ «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

- Հայտով չի ներկայացվել հավելված N 1.3-ը և N 1.4-ը,
- Ներկայացված չէ բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ փորձագետ՝ 1-ին կարգի հավաստագրով: Ներկայացված է գրավոր համաձայնություն բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ փորձագետի կողմից, սակայն համաձայնության մեջ նշված Ա. Պեպանյանի մասով ներկայացված հավաստագրով տվյալ մասնագետը հանդիսանում է «Հետազննության և անձնագրավորման ճարտարագետ»: Անհրաժեշտ է ներկայացնել բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ փորձագետ՝ **բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ փորձագետի 1-ին կարգի** հավաստագրով:
- Ներկայացված պայմանագրերը հանդիսանում են նմանատիպ, սակայն ներկայացված պայմանագրերից հասկանալի չէ հրավերով պահանջվող առնվազն 1000 (և ավել) այցելու ունեցող մարզահամալիրների տեխնիկական վիճակի հետազննություն իրականացնելու հանգամանքը, ուստի հնարավոր չէ գնահատել համապատասխանությունը հրավերի պահանջներին: Անհրաժեշտ է պարզաբանել կամ ներկայացնել այլ պայմանագիր:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 12.02.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում

շտկումը ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/3 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Մ. Աղայանց)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 13.02.2026թ. ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հացեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________________ Մ. Աղայանց

Անդամներ՝ ______________________ Հ. Գինովյան

______________________ Տ. Կոմիտասյան

______________________ Ա. Քոչարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Ա. Մանուչարյան